

# Ընտրությամբ գործունեության ծրագիր

## Օտար լեզու և թարգմանչություն

Ըստ հանրակրթյան պետական չափորոշիչների՝ «Օտար լեզուների իմացությունը նպաստում է անձի հաղորդակցական ունակությունների զարգացմանը, միջմշակութային փոխըմբռնմանը, այլ մշակույթների արժեքների ընկալմանն ու գնահատմանը:

Օտար լեզվի ուսուցման նպատակն է ընդլայնել սովորողի հաղորդակցվելու և համագործակցելու ունակությունները: Ուսումնական այս բնագավառը նպաստում է նաև բնության և ժամանակակից աշխարհի մասին առավել ամբողջական գիտելիքներ ստանալուն, գեղագիտական, բարոյական, սոցիալական, համամարդկային և ազգային արժեքների գիտակցմանը, պահպանմանը և փոխանցմանը»:

**ՀՀ ԿԳՆ Երևանի «Մխիթար Մեքաստացի» կրթահամալիրի 2009-2012թթ զարգացման ծրագիրում** նշված է.«Միջին դպրոցն իրականացնում է սովորողների նախասիրությունների զարգացման և մասնագիտական կողմնորոշման և լրացուցիչ կրթության ծրագրեր»:

«Օտար լեզու և թարգմանչություն» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)իրականացվում է փոքրաքանակ խմբերով՝ 12-15 հոգի

Ծրագրի խմբերը կարող են լինել խառը՝ կազմված 7-9-րդ դասարանցիներից. բաժանումը կատարվում է ըստ օտար լեզվի գիտելիքային մակարդակի:

Ծրագրի իրագործմանը շաբաթական տրամադրվում է 4 դասաժամ, որից մեկը՝ խոսքի մշակույթն է:

## Առարկայի ուսուցման նպատակը

- Բառապաշարի ընդլայնում, հարստացում
  - Օտար լեզվով ազատ շփվելու հմտությունների ձեռքբերում
  - Օտարալեզու տեղեկատվական աղբյուրներից օգտվելու հմտություններ
  - Օտար լեզվից հայերեն և հակառակը թարգմանելու հմտությունների զարգացում
  - Սովորողի նախասիրությունների զարգացում հետագա մասնագիտության ընտրության կողմնորոշում
- 
- Ուսումնական կաբինետ՝ էլ. գրատախտկով, պրոյեկտորով, անխափան ինտերնետ,
  - Ուսումնական թատրոն՝ օտար լեզվով ներկայացումների ցուցադրման և ներկայացման համար
  - Կինոսրահը՝ օտար լեզվով ֆիլմի դիտման և հետագա քննարկման համար

- Դպրոցի ներքին և արտաքին բակ-պարտեզներ՝ բացօթյա ընթերցումների, ակտիվ խաղ-դասերի, բնության երևույթների դիտարկման և նկարագրման համար
- Աստղադիտարանը՝ օտար լեզվով աստղագիտական ֆիլմերի դիտում: Հնարավոր է, որ խումբը իրականացնի այդ օտարալեզու ֆիլմերի թարգմանությունը հայերեն:

### Համացանցում ուսուցման միջավայրը

Գործածելով համացանցի լայն հնարավորությունները՝ սովորողները բազմազան կայքերի միջոցով նյութեր են ստեղծում (<http://dvolver.com/moviemaker/index.html>, [www.wikispaces.com](http://www.wikispaces.com), [www.wallwisher.com](http://www.wallwisher.com)), պատրաստում ֆիլմեր, տարբեր ուսումնական, բնագիտական, գիտահանրամատչելի տեսանյութեր թարգմանում, սոցիալական ցանցերի միջոցով շփվում միմյանց հետ օտար լեզվով:

- Յուրաքանչյուր ընտրությամբ խումբ ունենում է իր խմբային **բլոգը**, որտեղ և տեղադրվում են աշխատանքները, թարգմանությունները, իրականացվում են քննարկումներ օտար լեզվով, գրվում են կարծիքներ: Բլոգը կառավարում է դասավանդողը և անհրաժեշտության դեպքում կատարումուղղումներ: Բլոգում տեղադրված լավագույն նյութը (սահմանվում է ռեյթինգային համակարգով-ամենաշատ կարծիք կամ այցելություն ապահոված նյութը) հրապարակվում է Միջին դպրոցի ենթակայքում կամ mskh.am-ում:
- Յուրաքանչյուր սովորող ունի իր անհատական բլոգը, որտեղ պարտադիր ունի օտար լեզվի բաժին, որտեղ կարող է տեղադրել իր ստեղծագործական, հետազոտական աշխատանքները, ուսումնասիրությունները: Նյութի հղումը նա կարող է ուղարկել դասավանդողին կամ այլ սովորողներին՝ քննարկելու կամ ծանոթանալու համար:
- Բլոգերում օտար լեզվին վերաբերող բոլոր քննարկումները, կարծիքները, առաջարկները գրվում են օտար լեզվով: Հաճախ դասարանում ընթերցված կամ հետազոտած տեքստը, նյութը կարող են դառնալ տնային առաջադրանքներ՝ կարծիքների կամ մեկնաբանության տեսքով:
- Սովորողները գրանցված են նաև բազմաթիվ **սոցիալական ցանցերում** /Facebook, Twitter, LinkedIn և այլն, որոնց միջոցով նրանք նույնպես կապի մեջ են լինում միմյանց և դասավանդողի հետ: Քննարկումները սոցիալական ցանցերում թույլ են տալիս շփումը դարձնել անընդհատ և ավելի հրապարակային:
- Սովորողներին տրվում են թեմաներ, որոնց մասին նրանք պետք է նյութ հայթայթեն տարբեր կայքերից, այլ աղբյուրներից և թարգմանեն կամ ադապտացնեն: Այդ նյութերով նրանք ուսումնա-հետազոտական աշխատանքներ են կատարում: Սովորողները սպասարկում են նաև Կրթահամալիրի կայքի անգլերեն բաժինը: Օտարալեզու կայքում տեղադրվում են այն թարգմանությունները, որոնց բովանդակությունը ուսումնական և տեղեկատվական է և կարող է հետաքրքրել կայքի օտարերկրյա ընթերցողներին:
- Կոմունիկատիվ (խոսակցական) օտար լեզվի զարգացման համար գործածվում են տարբեր ուսումնական կայքեր, երկխոսությունների էլեկտրոնային ժողովածու: Սովորողները **Live@Edu** համակարգից օգտվելով՝ օտար լեզվով նամակագրական կապ են հաստատում միմյանց հետ: Տնային առաջադրանքները սովորողներին ուղարկվում է

**Live@Edu** համակարգի օրացույցների միջոցով, որտեղ գրվում է առաջադրանքի բովանդակությունը, պահանջները, կատարման ժամկետները: Օրացույցով ուղարկված նամակները նշված ժամանակահատվածում անընդհատ հիշեցնում են սովորողներին կատարման մասին: Նույն համակարգի **SkyDrive**-ի միջոցով սովորողները և դասավանդողները իրար փոխանցում են անհրաժեշտ նյութերը, դասերը, կատարած աշխատանքները: Դասավանդողը տարվա սկզբում իր SkyDrive-ում տեղադրում է տարվա ընթացքում հնարավոր թարգմանվելիք նյութերը և հղումը ուղարկում սովորողներին: Նրանք այնտեղից ներբեռնում են թեմաները, տեքստերը, թարգմանում դրանք, տեղադրում կայքում, բլոգում կամ իրենց **SkyDrive**-ում:

- Տնային առաջադրանքները համացանցում կատարելու և դասավանդողին առցանց ստուգելու հնարավորություն է տալիս նաև **Google** կայքի **Documents** բաժինը, որտեղ գրանցվելով և՛ սովորողը, և՛ դասավանդողը կարող են միաժամանակ նույն տեքստի, նյութի, թեստի վրա աշխատել՝ տեսնելով մեկը մյուսի ուղղումները, մեկնաբանությունները: Այս միջոցը թույլ է տալիս միաժամանակ շատ անձանց աշխատանքը տեսանելի դարձնել համացանցում: Նմանօրինակ տնային աշխատանքը հարմար է նրանով, որ դասարանում ստուգելու համար ժամանակ չի խլում:
- Խոսակցական օտար լեզվի բարելավման համար կարելի է հատուկ օրեր նշանակել, որպես օտար լեզվի ակումբ՝ (English Club), որի համար նախօրոք թեմա է որոշվում և զեկուցողը նախապատրաստվում է, իսկ մյուսները հնարավոր հարցեր են պատրաստում քննարկման համար:
- Սովորողները գրանցվում են [www.dropbox.com](http://www.dropbox.com) կայքում, բացում իրենց թղթապանակը և բոլոր նյութերը կարող են պահել նաև այդ առցանց տարածքում:

## 2. Վերոհիշյալ բոլոր աշխատանքները կատարելու համար դասավանդողին և սովորողին անհրաժեշտ են հետևյալ գործիքներ ու նյութերը

### 1. Էլեկտրոնային գրատախտակ պրոյեկտոր

- Օտար լեզվով ֆիլմերի, ուսումնական նյութերի դիտում  
<http://www.english-cartoons.ru/educationalenglishcartoons.html>, <http://abc-english-grammar.com/1/movies.htm>, <http://englishon-line.ru/audirovanie.html>, <http://cartoons-english.ru/kids-movie-in-english.html>
- Օտարալեզու ուսումնական խաղեր
- Պրոյեկտոր՝ նյութերի ներկայացման քննարկման համար
- Կայքի նյութերի ընթերցում, համացանցային կայքեր՝ ուսումնական աշխատանքներ անելու համար
- Smart Notebook ծրագրով պատրաստած դասերի դիտում, օգտագործում

### 2. Անհատական նոթբուք-նեթբուք

- Առցանց աշխատանք դասարանում
- Առցանց աշխատանք տանը
- Անհատական առաջադրանքներ

- Կայքի սպասարկում դասարանում
- 3. Էլեկտրոնային գրիչներ**
- Թեստերի կատարում
  - Վիկտորինաների պատրաստում և կատարում
- 4. Թվային ֆոտոխցիկտեսախցիկ**
- Նյութերին կցվող լուսանկարների համար
  - Կոմիքսների պատրաստում
  - Ուսումնական ճամփորդությունների հաշվետվության համար
  - Ֆիլմերի, կարակե-տեսահոլովակների պատրաստում
- 5. Թվային ձայնագրիչ**
- Օտար լեզվով քննարկումների ձայնագրություն՝ ռադիոլուրի համար
  - Օտարերկրյա հյուրերի հետ հարցազրույցներ վարելու համար
  - Ինքնուրույն կարակենների պատրաստման համար
  - Ֆիլմերի, մուլտֆիլմերի, ուսումնական նյութերի թարգմանությունը ընթերցելու համար
6. Դասարանում կարող են առկա լինել բառարաններ, դասագրքեր, գեղարվեստական գրականություն: Այս ամենը կարելի է օգտագործել նաև դպրոցի գրադարանում՝ այցելելով ընթերցասրահ:

### **Օտար լեզվի ընտրությամբ գործունեության բովանդակությունը**

Դասավանդողի կողմից, ըստ սովորողների նախասիրությունների, ընտրվում են տարբեր թեմաներ, նյութեր, տեքստեր՝ թարգմանելու համար: Թեմաները ընտրվում են ըստ կարևորության, կարող են առաջարկվել նաև սովորողների կողմից: Թեմաների ընտրության մեջ մեծ դեր են խաղում կրթահամալիրային միջոցառումները, միջազգային տոները, համաշխարհային կարևոր նորությունները, իրադարձությունները: Սովորողները կարող են նաև տարբեր օտարալեզու նորությունների կայքերից թարգմանել միջազգային լուրեր, նորություններ, հետաքրքիր թեմաներ և թարգմանված նյութերը տեղադրել կայքում:

Կրթահամալիրի տոնացույցով որոշված միջոցառումների ընտրությամբ խմբի մասնագիտական մասնակցությունը.

- **Սեպտեմբերի 5** – *Տարբեր երկրներում ուսումնական տարվա սկզբի, դրանց առանձնահատկությունների մասին նյութեր*
- **Սեպտեմբերի 23** - նոյեմբերի 25 - մեդիաօլիմպիադա «Աշուն»-*օտարալեզու առաջադրանքները սովորողները պարտադիր պետք է կատարեն, իրենք կարող են*

*կազմել առաջադրանքներ իրենց տարեկիցների կամ փոքրերի համար,  
դասավանդողների համար*

- **Հոկտեմբերի 7-9** - DigiTec Expo 2012- սովորողները այցելում են ցուցադրության տաղավարներ, հանդիպում օտարերկրյա այցելուների հետ, օտար լեզվով հարցազրույցներ վերցնում, կայքում տեղեկատվական նորություններ տեղադրում՝ տեքստային կամ ռադիոլուրի տեսքով:

**Հոկտեմբերի 7-21**- հեղինակային մանկավարժության արդյունքների հասարակական ամենամյա հոկտեմբերյան մեդիափորձաքննություն- սովորողներ ըմբռնակցում են բաց դասերին, այլոց ներկայացնում իրենց փորձը, հմտությունները, գիտելիքները: Իրենք, որպես փորձագետ, այցելում են կրթահամալիրի այլ դպրոցներ, հարցազրույցներ վերցնում դասավանդողներից, իրենց կրտսեր ընկերներից (ցանկալի է օտար լեզվով կամ էլ իրենք տեղում թարգմանում են) և կրկին տեղադրում կայքում կամ իրենց անհատական բլոգերում:

**Հոկտեմբերի 24-30** – սովորողների աշնանային արձակուրդ աշնային օլիմպիական ճամբարներ-ճամբարների այցելությունների մասին հաշվետվությունը ներկայացնում են օտար լեզվով: Ներկայացման ձևերը կարող են լինել տարբեր՝ տեքստ, ֆոտոշար, տեսաֆիլմ, ռադիոլուր:

**Նոյեմբերի 14-19** – Միսիթար Սեբաստացու օրեր. Կրթահամալիրի տոնը-Սեբաստացու օրերին սովորողները տարբեր օտարալեզու կայքերից Մ.Սեբաստացու մասին նյութեր են գտնում, թարգմանում: Կայքի համապատասխան բաժնում տեղադրում են տոնախմբության մասին պատմող լուրերը սվյալ օտար լեզվով:

**Դեկտեմբերի 12-24** – ձմեռային ուսումնա-հետազոտական ճամբարներ-ամանորյա կարաոկենների պատրաստում, կարաոկենների CD, ամանորյա տոնախմբության նախապատրաստում-դիմակներ, այլազգի սովորույթներ, տարատեսակ տոնածառեր (այս ամենի մասին նյութերը հայթայթվում են օտարալեզու տարբեր կայքերից, թարգմանվում են, տեղադրվում կայքում, օգտագործվում ամանորյա տոնախմբությանը/

**Դեկտեմբերի 24 -28** – ամանորյա ծեսեր-Մարմարյա սրահում օտար լեզվով երգերի կատարում (երգերը նախօրոք ընտրվում են, թարգմանվում, պատրաստվում են դրանց կարաոկենները/): Կարող են լինել նաև օտար լեզվով բեմադրություններ

**Դեկտեմբերի 26- 2012թ. հունվարի 8** – սովորողների ձմեռնային արձակուրդ-

*արձակուրդների ընթացքում սովորողներին էլ.փոստի միջոցով առաջադրանքներ են ուղարկվում, թեստեր և այլն: Կատարելուց հետո դրանք ուղարկվում են դասավանդողին:*

**Հունվարի 25-28** – ընտրությամբ գործունեության և խորացված ուսուցման կիսամյակային հաշվետվություններ-հաշվետվությունները տեղադրվում են կայքում «Հաշվետվություն» բաժնում: Հաշվետվության մեջ մանրամասն ներկայացվում է կատարված աշխատանքը (անհատական և խմբային), կայքերում տեղադրված նյութերի հղումները, օգտագործված ռեսուրսները, թարգմանված նյութերի աղբյուրները:

**Դեկտեմբերի 12 – փետրվարի 10** - Մեդիաօլիմպիադա «Ձմեռ» օտար լեզվով առաջադրանքները սովորողները պարտադիր պետք է կատարեն, իրենք կարող են կազմել առաջադրանքներ իրենց տարեկիցների կամ փոքրերի համար, դասավանդողների համար

**Հունվարի 15 - փետրվարի 11** – Հանրակրթական Դիջիտալ 2012-սովորողներն իրենց ստեղծած նյութերը ներկայացնում են Դիջիթալին:

**Փետրվարի 6 -20** – Թումանյանական մեդիաօրեր-Տարբեր կայքերից և գրքերից գտնում են Թումանյանի ստեղծագործությունների թարգմանությունները տարբեր օտար լեզուներով, վերլուծում դրանք, համեմատում բնօրինակի հետ:

**Մարտի 1-15** - Մեդիաօլիմպիադա «Գարուն»- օտար լեզվի առաջադրանքները սովորողները պարտադիր պետք է կատարեն, իրենք կարող են կազմել առաջադրանքներ իրենց տարեկիցների կամ փոքրերի համար, դասավանդողների համար

**Մարտի 1-15** – Չարենցյան օրեր Տարբեր կայքերից և գրքերից գտնում են Չարենցի ստեղծագործությունների թարգմանությունները տարբեր օտար լեզուներով (օրինակ՝ «Ես իմանուշ Հայաստանի»), վերլուծում դրանք, համեմատում բնօրինակի հետ:

**Մարտ - ապրիլ** – սովորողների գարնանային արձակուրդ-արձակուրդների ընթացքում սովորողներին տրվում է հանձնարարություն՝ գարնանային թեմաներով:

**Մարտ - ապրիլի 1** – Գարնանային ծառատունկ, Ծաղկազարդ-սովորողները ուսումնա-հասարակական աշխատանքներ են կատարում բակում, մասնակցում են ծառատունկին, ճշտում իրենց տնկած ծառերի տեսակները, դրանց խնամքի մասին տեղեկություններ հայթայթում, թարգմանում և տարվա ընթացքում հետևում են իրենց տնկած ծառերին: Ծառատունկի և այլ հասարակական աշխատանքների արդյունքները ֆոտոշարի և տեղեկատվության տեսքով օտար լեզվով տեղադրվում է կայքի անզլերեն բաժնում:

**Ապրիլի 8 (ապրիլի 9-13)** – Ձատիկ-նյութեր են պատրաստում աշխարհի տարբեր երկրներում գատիկի անցկացման մասին՝ սովորույթներ, առանձնահատկություններ, երգեր

**Ապրիլի 26-30** – էկոտուրի շրջանակներում էկոլոգիական խնդիրներին վերաբերող ֆիլմեր են թարգմանում օտար լեզվից (հայերեն ձայնագրությունը կամ տեքստը կցվում է ֆիլմին), տեղադրում կայքում: Բարձրաձայնում են իրենց շրջապատող էկոլոգիական խնդիրները, օտար լեզվով ներկայացնում խնդիրը, փորձում տալ լուծումներ, համեմատում են այլ երկրներում գոյություն ունեցող էկոլոգիական խնդիրների և դրանց լուծման հետ:

**Ապրիլի 28-30** - հայրենագիտական ստուգատես-օտար լեզվով նյութեր, ռեպորտաժներ այցելած վայրերից

**Մայիսի 14-27** - «Հրաժեշտ» ուսումնական-տոնական նախագիծ-օտար լեզվով երգ-նվեր շրջանավարտներին

**Մայիսի 17-19** – հեղինակային մանկավարժության հեղինակների մայիսյան մեդիահավաք-սովորողները մասնակցում են բաց դասերին, այլոց ներկայացնում իրենց փորձը, հմտությունները, գիտելիքները: Իրենք, որպես փորձագետ, այցելում են կրթահամալիրի այլ դպրոցներ, հարցազրույցներ վերցում դասավանդողներից, իրենց կրտսեր ընկերներից (ցանկալի է օտար լեզվով կամ էլ իրենք տեղում թարգմանում են) և կրկին տեղադրում կայքում կամ իրենց անհատական բլոգերում:

**Հունիսի 1-15**- ամառային ուսումնահետազոտական ճամբարներ-ուսումնական ճամփորդություններ, չթարգմանված ֆիլմերի դիտում, ակտիվ և դասարանական խաղերի կազմակերպում

**Մայիսի 29- հունիսի 8** – ընտրությամբ գործունեության և խորացված ուսուցման տարեկան հաշվետվություններ-հաշվետվությունները տեղադրվում են կայքում «Հաշվետվություն» բաժնում: Հաշվետվության մեջ մանրամասն ներկայացվում է կատարված աշխատանքը (անհատական և խմբային), կայքերում տեղադրված նյութերի հղումները, օգտագործված ռեսուրսները, թարգմանված նյութերի աղբյուրները:

**Հունիսի 1-10** – Թատերական ստուգատես- օտար լեզվով ներկայացումներ /տարբեր ժանրերի/

**Հունիսի 18-20** – Ամենամյա երաժշտական փառատոն-անզլերեներգեր, կառառկեներ, անհրաժեշտության դեպքում թարգմանչական ծառայությունների մատուցում (եթե այլ սովորողները օտար լեզվով երգ են ցանկանում երգել, սակայն ծանոթ չեն բովանդակությանը, չգիտեն իմաստը, նրանք կարող են դիմել ընտրությամբ խմբին՝ իրենց

*օգնելու համար):*

**Հուլիսի 1 - օգոստոսի 1** - Մեդիաօլիմպիադա «Ամառ»-օտար լեզվով  
առաջադրանքները սովորողները պարտադիր պետք է կատարեն, իրենք կարող են  
կազմել առաջադրանքներ իրենց տարեկիցների կամ փոքրերի համար, դասավանդողների  
համար: Ամառային օլիմպիադան կարող է լինել որպես ամառային արձակուրդների  
առաջադրանք, հաճախ նախագծի տեսքով:

## **Ինքնակրթություն**

Սովորողներին օտար լեզվով ընթերցման համար գրքեր են առաջարկվում:  
Ինքնակրթության համար կան նաև բազմաթիվ կայքեր, որոնց միջոցով սովորողները  
ազատ ժամանակ կամ արձակուրդներին կարող են բարելավել իրենց ունկնդրման,  
ընթերցողական և ճանաչողական գիտելիքներն ու հմտությունները: Ինքնակրթությունը  
կարող է նաև հաճելի ժամանցի վերածվել՝ կայերից ուսուցողական խաղեր խաղալու  
համար:

[www.tolearnenglish.com](http://www.tolearnenglish.com)

[www.homeenglish.ru](http://www.homeenglish.ru)

[www.englishtips.org/](http://www.englishtips.org/)

[www.learnenglish.britishcouncil.org/en/](http://www.learnenglish.britishcouncil.org/en/)

<http://www.bbc.co.uk/skillswise>

<http://www.wordsmyth.net/>

<http://www.breakingnewsenglish.com/>

<http://www.wordcount.org/main.php>

<http://www.homeenglish.ru/Games.htm>

**Հանրակրթության պետական կրթակարգի համաձայն՝** «Մայրենի լեզուն կրթության լեզուն է:  
Օտար լեզուների ուսուցումը կազմակերպվում է մայրենի լեզվի հիմքի վրա»: «Խոսքի մշակույթ»  
առարկան զուգորդվում է օտար լեզվի ընտրությամբ գործունեության հետ՝ սովորողները  
մշակում և կատարելագործում են իրենց թարգմանությունները, հայերենից օտար լեզուներով  
թարգմանելու համար հետաքրքիր նյութեր պատրաստում, թարգմանում, տեղադրում  
կայքերում:

### **Սովորողի ուսումնական գործունեության ձևերը (բովանդակությունը, կազմակերպումը)**

Սովորողի ուսումնական գործունեությունը կարող է կազմակերպվել.

- դասարանում /կաբինետում/-դասագրքով կամ թվային միջոցով՝ ընթերցում, քննարկում, ունկնդրում, զրույց, բանավեճ



- ներքին բակում-գրույց, քննարկում, զբոսանք, հարցազրույց
- ընթերցասրահում-ընթերցում, ունկնդրում, տեսաֆիլմի դիտում
- ուսումնական ճամփորդության ընթացքում-տեսարժան վայրերի, բնության մասին քննարկումներ, նկարագրումներ անզլերենով, անզլերենով գիրի ունկնդրում,
- դպրոցի թատրոնում-անզլերենով ներկայացումների, փոքր բեմադրությունների, սկետչերի, իրավիճակների բեմադրում

## **Աշխատանք դասարանում և տանը**

**Դասարանում, ուսումնական պարապմունքի ժամանակ** կատարվում է այնպիսի աշխատանք, որը արդյունավետ է կատարել դասավանդողի վերահսկողությամբ կամ խմբային տարբերակով: Նման աշխատանքների շարքում է օտար լեզվով քննարկումների կազմակերպումը: Թեմաները բխում են և՛ դասագրքից, և՛ տվյալ պահին որևէ արդիական, կիզակետային հարցերից: ՏՀՏ-ների լայն գործածումը արդեն թույլ է տալիս ոչ միայն գրի առնել նման քննարկումների արդյունքները, այլ նաև ձայնագրել դրանք, տեղադրել կայքում, հրավիրել այլոց՝ մասնակցելու, գրելու մեկնաբանություններ, կարծիքներ: Սա արդեն փոխում է դասարանակ անաշխատանքի կազմակերպման ձևը և դառնում դասարանական աշխատանքի շարունակությունը տանը: Տնային քննարկմանը հրավիրվում են մասնակցելու նաև ծնողները կամ այլ դասարանների սովորողները:

Հետաքրքիր են նաև օտարալեզու ֆիլմերի դիտումից հետո կազմակերպած քննարկումները, կարծիքների հայտնումը: Իհարկե, օգտվելով մեդիայի հնարավորություններից, հաճախ առցանց քննարկումներ են կազմակերպվում, որոնց համար ընտրվում է հարմար ժամ՝ երեկոյան: Դա մեծապես նպաստում է նրան, որ քննարկմանը մասնակցեն հնարավորին չափ շատ սովորողներ, դասավանդողներ, ծնողներ, դպրոցական կայքի հյուրեր կամ պատահական այցելուներ: Սակայն կենդանի, դասարանական քննարկման առավելությունն այն է, որ սովորողը ստիպված է ազատվել լրացուցիչ բարդություններից և խոսել օտար լեզվով: Նմանատիպ աշխատանքի մյուս օգուտն այն է, որ սովորողները սկսում են լսել միմյանց, ուսուցչին, աշխատում են հանպատրաստից, հենց տեղում կառուցել իրենց խոսքը, երբեմն սխալ, սակայն համառորեն ձգտելով արտահայտվել:

Որպես արդյունավետ դասարանական աշխատանք՝ իրականացվում է նաև տարբեր մեթոդների կիրառումը, որը հնարավոր է անել միայն խմբային տարբերակով: Նման մեթոդների կիրառումը հետաքրքիր է դարձնում դասը, սովորողներին խթանում մեխանիկական աշխատանքից անցնելու մտավորին: Հաճախ կիրառվում են պրիզմայի, ձնագնդի, գունավոր գլխարկների, փազլի /Jigsaw/ և այլ մեթոդները:

Դասարանում հաճախ է օգտագործում **HotPotatoes** ծրագիրը [ծրագիրը կարելի է ներբեռնել այստեղ](#) /, որը թույլ է տալիս տարբեր տեսակի թեստեր, խաչբառեր, հետաքրքիր հարցաշարեր կազմել և առցանց ռեժիմով կատարել դրանք: Հաճախ իրենք՝ սովորողներն են կազմում այդ հարցաշարերը տանը և դասի ընթացքում ներկայացնում դասը ընկերներին:

Ընտրությամբ գործունեության խմբի յուրաքանչյուր աշխատանք կարող է դառնալ հետազոտական նյութ: Խումբը իրականացնում է օտարալեզու ֆիլմերի, ուսումնական նյութերի, այլ առարկաների դասավանդողներին անհրաժեշտ նյութերի թարգմանություն: Պարտադիր պայման է հանդիսանում այն, որ նյութը պետք է լինի անզլերեն կամ անզլերենից թարգմանված

(սկզբնաղբյուրը նշվում է): Նյութը կարող է լինել սովորողի ստեղծագործությունը օտար լեզվով՝ պատմվածք, բանաստեղծություն և այլն, որը կտեղադրվի իր անձնական բլոգում: Լավագույները կհրապարակվեն ընդհանուր կայքում:

Ընտրությամբ խումբը մասնակցում է **ուսումնա-հասարակական աշխատանքներին**, որի մասին հաշվետվությունը, նյութը կամ ռեպորտաժը պատրաստվում է օտար լեզվով: Ուսումնա-հասարակական աշխատանքները կարող են լինել.

- Աշխատանք դպրոցի բակում- սովորողները աշխատանքի ընթացքում լուսանկարներ են անում, անգլերեն պատմում են կատարած աշխատանքի վերաբերյալ:
- Աշխատանք գրադարանում-վերանորոգում են գրադարանի անգլերեն գրքերը – աշխատանքի ընթացքում սովորողները ծանոթանում են գրադարանում առկա օտարալեզու գրականությանը,
- Աշխատանք կրտսեր դպրոցներում-սովորողները կարող են այցելել կրթահամալիրի կրտսեր դպրոցներ, իրենց հետ անգլերեն փոքր դասեր անցկացնեն, պատրաստեն կարտկեններ փոքրիկների համար, սովորեցնեն այդ երգերը, օգնեն դասվարներին պատրաստվել տարբեր միջոցառումների, մեդիաօլիմպիական առաջադրանքներ և խաղեր կազմել փոքր ընկերների համար

Խմբի սովորողները մասնակցում են նաև **ուսումնական ճամփորդություններին**: Նրանք այցելում են տարբեր թանգարաններ, տեսարժան վայրեր, թատրոն, չթարգմանված ֆիլմերի ցուցադրության, զբոսանքների: Այցելության ավարտին նրանք անգլերենով պատմում են օրվա մասին: Թանգարանների այցելություններից հետո նրանք կարող են անգլերենով պատրաստեն ուղեցույց: Օրվա ընթացքում էլ կարող է պայման դրվել միայն օտար լեզվով հաղորդակցվելու:

### **Ստուգում և գնահատում**

Գնահատումը իրականացվում է 10 բալանոց համակարգով: Գնահատականը ձևավորումը ստուգման հետևյալ կետերի միջոցով.

- Կատարած թարգմանություններ
- Ինքնուրույն ուսումնական նյութեր
- Մասնակցություն մեդիաօլիպիադային
- Մասնակցություն միջոցառումներին
- Կայքում տեղադրված նյութերի քանակ և որակ
- Մասնակցություն ուսումնա-հասարակական աշխատանքներին
- Հետազոտական աշխատանք
- Ինքնուրույն նախաձեռնություններ

Գնահատման սանդղակ /օգտվել են Գևորգ Հակոբյանի առաջարկած օրինակից/

Առաջադրանքի տեսակը	Ամենաշատ միավորը
Դասարանական աշխատանք	2 միավոր
Տնային աշխատանք <ul style="list-style-type: none"> <li>• Թեստ, թարգմանություն, մեկ նյութ</li> <li>• նախագիծ</li> </ul>	1 միավոր 2 միավոր
Ինքնաստուգում և ընթացիկ ստուգումներ	1 միավոր
Ամփոփիչ ստուգում	1 միավոր
Հեռավար առաջադրանք	1 միավոր
Ստեղծագործական-հետազոտական աշխատանք	1 միավոր
Օլիմպիադաների մասնակցություն	1 միավոր

Լուսինե Բուշ